Մէնէվիշեան, հայր Գաբրիել.—«Ազգային մատենագարան». Ազգաբանութիւն ազնուական զարմին Տիւզեանց։ Վիէննա, տպ. Մխիթարեան 1890 թ., տուռ № 12, 50 երես in 4°, 8 պատկերով, գինը 1 Ֆր.։

Գիտական, գրական կամ հասարակական ասպարիզում հռչակած մարդկանց կենսագրութիւնները հարկաւոր են և ունին կրթիչ ազդեցութիւն։ Բայց մեծ մարդ անունը չի կարելի տալ մէկի պաշտօնի բարձրութեան կամ շահաւէտութեան վրայ հիմնուելով։ Կարող է նոյն իսկ մի ամբողջ տոհմ, եթէ կամենում էք և «աղնուական», մի քանի դարերի ընթացքում «ի զոհութիւն վեհապետների» ժառանգաբար վարել զանազան շահաւէտ պաշտօններ, դառնալ «արքունեաց ոսկերիչներ» կամ «փողերանցի վարիչներ», ինչպէս հէնց «աղնուական զարմն Տիւզեանց», ստանալ բազմաթիւ շքանշաններ, գրաւել սուլթանների սէրը, որ, ի դէպ նկատենք, չի արգելում նրանցից մի քանիսներին նոյն վեհապետների հրամանով «հաչուչն անհաւասարութեան պատճառով» և գլխատուել կամ կախուել՝ բայց չը նայած այդ բոլորին մնալ այդ տոհմը ընդհանուր տեսակէտից այնքան աննշան որ շատ զարմացնի ոչ նախապաշարուածներին այն ճիգը ու ջանքը որ թափում է Մխիթարեան միաբանութեան արժանապատիւ հայր սուրբը, որպէս զի «ժամանակի ժանգահարիչ ակռաներից» ազատի «ազգային մատենադարանի» համար այնպիսի թանկագին փաստեր, թէ այս ինչ Տիւզեան պէտ այս ինչ ժամանակ ծնաւ, այս ինչ շահաւէտ պաշտօնը վարեց, որը այս ինչ «չարակամ և քսու» հրէան ուզում էր խլել, այս ու այն շքանշանները ստացաւ, այս ինչ նշանաւոր մարդու դուստրը կնութեան առաւ, այսքան զաւակ ունեցաւ, որոնցից այս մէկը «չորեքամսեայ» վախճանուեց և այլն։

Եթէ այդ շքեղ ու խնամքով տպուած 50 երեսներում փնտռենք ընդհանուրի համար նշանակութիւն ունեցող մի օգտակար գործ, մենք կը գտնենք որ «Տիւզեանների հրեքդարեան պատմութեան մէջ» եղել է մի «դիւցազն» որ «գրեթէ» միայն իւր հաչուով երկու փոքրիկ դպրոց է հաստատել և մի ընկերութիւն, որի ծախքով հրատարակել է տուել «Դիտակ Բիւզանդեան» անունով մի ամսաթերթ։ Ահա այս աղնուազարմ տոհմի բոլոր առնչութիւնը հայ կեանքի և գրականութեան հետ։ Ի հարկէ ներկայ Տիւզեաններին շատ հետաքրքրում կը լինի իմանալ իրանց տոհմի ծագումը և իւրաքանչիւր «դիւցազն» անդամի մեծագործութիւնները, բայց թէ ինչ կապ ունի այդ ընտանեկան պարծենկոտ փափագը «ազգային մատենադարանի» և հայ գրականութեան հետ, և թէ ինչ ուսանելի բան կայ առհասարակ այդ տեսակ տոհմագրութիւնների մէջ՝ անհասկանալի է։

Լ. Ս.